

«ՓՈՂ ՏՈՒՆԻՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ» ԳՈՒԿ ԺԸ 16:

ՀԱՏՈՐ ԼԴ. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, 1905 ԹԻՒ 10

ՍՄԵՐՆՍ ԵՒ ՊԵՏՐՍԵՐԻ

Ահա երկու մարդիկ որոնք իրենք զիրենք համբաւաւոր ըրին և մեծապէս աւելցուցին աշխարհի հարստութիւնը, պողպատ շինելու նոր գործողութիւններ հնարելով: Պողպատն է երկաթ որ իր մէջ քիչ մը բնածուխ ունի, բայց թափու երկաթին մէջ զքանուած էն աւելի քիչ: (Բնածուխն է այն տարրը որ կը գտնուի փայտածուխին մէջ): Որովհետեւ պողպատը հասարակ երկաթէն աւելի կարծր է, կը գործածուի, ինչպէս գիտէք, բոլոր կտրոցներուն համար, և իր կարծրութեամբ աւելի զիմացկուն է և ուստի կարծր բաներու գործածուելու յարմար, զոր օրինակ երկաթուղւոյ ձողերու: Առաջ շատ ծախք պահանջող գործողութիւններով կը շինուէր պողպատը: Եւ դանակի բերանները և բոլոր միւս սուր գործիքները կը շինուէին նախ պողպատէ նեղ շերտ մը երկաթի փակցնելով: Այս երկու մարդոց գիւտերը փոխեցին ասոնք ամէնը:


Սըր Հէնրի Պէտրսըր Անգլիացի մըն էր որ ծնաւ 1813ին: Իբր 1830ին կատարելագործեց հանքային երկաթէ պողպատ շինելու իր նոր և գործնական մեթոտը: Առաջ շատ անգամ ձեռք զարնուած էր ասոր, բայց առանց յաջողութեան: Պէտրսըրեան մեթոտը, ինչպէս կը կոչուի աւնիկա, է օդի հոսանք մը անցնել հալած երկաթին մէջէն: Անոր այս գիւտը աշխարհի հարստութիւնը աւելցուց Ռաթսի շոգեշարժ մեքենային հնարուելէն ի վեր գտնուած ունէ գիտէ աւելի: Այս պատկերը առնուեցաւ երբ անիկա 80 տարեկան էր:

Սըր Չարլս Ուիլեմ Սիմոնս ծնընդեամբ Գերմանացի էր, բայց Անգլիա գնաց 20 տարեկան, և այդ երկիրը իր բնակավայրն ըրաւ: Ծնաւ Պէտրսըրէ 10 տարի ետքը, և անոր նման Սըր

ախտըրը ընդունեց Բրիտանական կառավարութենէն: Հնոց մը հնարեց հանքային երկաթէ պողպատ շինելու համար, և հիմա պողպատը բոլորովին այս երկու մեթոտներէն մէկով կը շինուի:

Մէկ տարուան մէջ շինուած պողպատին քանակութիւնը ահագին է: Դուք գիտէք թէ մէկ կանգունը (արշըն) որչափ երկայնութիւն ունի երեակայեցէք 22 կանգուն տրամագիծով և 1,500 կանգուն բարձրութեամբ պող-

իւր տաքութեամբ գլխուդ վրայ կը ծագէր, և դուն սաստիկ փափաքով ծունկերուդ վրայ եկար խմելու համար պղտիկ վտակին փայլուն ջուրէն որ խոխոջելով կը ճամբորդէր դէպ ի ծով: Բայց ջուրը, թէև անուշ, բոլորովին քու ակնկալութեանդ չէր պատասխաներ: Իր ճամբան վազելու միջոցին փտած խոտի կտորներ բերած էր իրեն հետ, նաև շիւղեր և փայտի կտորներ: Ծառերուն տերևները որոնք զիրենք կրող ոստերուն վրայ



պատէ ահագին սին մը, որ ցած աւապերէն վեր բարձրանայ: Այս կը ցուցնէ 1892ին շինուած պողպատին քանակութիւնը, և հիմա ատկէ ալ աւելի կը շինուի:

ԱՌԵՒԻ ԲԱՐՁՐ

Երբեք կայնեցար խմելու համար այն ջուրէն որ բլուրին կողմի վար կը վազէ դեղէն դուրս գտնուած հեռաւոր աղբիւրէ մը բղխելով: Գու երկար պտոյտդ ծարացուց քեզ: Արեւ

կը գտնուէին քիչ առաջ, վար թափած էին ջուրին մէջ և անոր անախորժ համ մը տուած էին: Նաև աւրին ճառագայթն ալ քիչ մը տաքցուցած էր ջուրը, և ջուրը քեզ այնպէս գոհ չէր ընէր ինչպէս կ'ակնկալէիր: Այնուհետև եւրո և բլուրին կողմէ վեր քալեցիր դէպի այն տեղը, ուր կը գտնուէր վտակին աղբ: Եթէ միայն ատիկա կարող ըլլայիր գտնել, անտարակոյս ջուրը մաքուր պիտի տեսնէիր: Այսպէս յառաջ կը

քալես մարգագետինն մեջէն ուր խտրութեամբ կը փաթթուի, յառաջ՝ ուր մացառներ բուսած են ճամբուղ վրայ, յառաջ՝ ուր վտակը գետնէն դուրս կը բղխի: Հոն նորէն կը ծուռնուի և կը խմբուր երկար ատեն և փափաքով ու ախորժով: Այն ատեն ի՞նչ մաքուր էր ջուրը: Ի՞նչ անուշ համ ունէր: Դուք ոտքի ելար զովացած և զօրացած՝ քու ճամբուղ բոլոր մնացած մասին համար:

Ջուրերը ամէնէն մաքուր կ'ըլլան աղբերակներին վրայ:

Երբեմն ջուրէն աւելի ուրիշ բաներու ծարար կը քաշենք աշխարհիս մէջ: Երիտասարդը կամ պատանին միշտ կը բաղձայ ճշմարտութեան խորունկ հոսանքէն խմել: Մենք կը փափաքինք գիտնալ ամէն ինչ որ կարելի է գիտնալ կեանքին և անոր նշանակութիւններուն վրայով: Ո՞րչափ աւելի հեռու երթանք մեր փնտրատուքին մէջ, այնչափ աւելի կ'աւելնայ մեր ծարարը: Այս է կերպերէն մին որով վարժապետ մը դէպ ինք կը քաշէ իր աշակերտները: Եւ մենք կը ջանանք գտնել տեղ մը ուր կարենանք ծնրագրել և խմել գիտութեանէն որու այնքան սաստիկ կը փափաքինք: Երբեմն կը կարծենք թէ գտած ենք զանիկա նոր գիրքի մը և կամ մարդու մը գրութիւններուն մէջ: Բայց թէ և ասոնք չափով մը անցնեն մեր ծարարը, տակաւին կ'ելլենք առանց կատարելագոյն յազեցած սիրտերու: Ի՞նչ է այս չյազեցնալուն պատճառը: Պատճառն այն է որ մենք խմելոյնք բլուրին ստորոտէն, ուր ջուրը տաք է, և խոտի ու փայտի կտորներ ինկած են հոսանքին մէջ և աւրած են զայն:

Պէտք է որ աւելի բարձր ելլենք դէպի աղբիւրին ազը: Եւ աղբիւրը ամէնէն մաքուր պիտի գտնենք հոն ուր կը բղխի անիկա այն հին գիրքէն, գիրքերուն գիրքէն: Մեր ճամբուն մէջ յառաջ մղուելով և անցնելով այն գիրքերէն զորոնք մարդիկ գրած են երբեք, դարձնելով մեր կոնակները ամէնէն շքեղ պատկերներուն զորոնք մարդիկ նկարած են երբեք, փակելով մեր աչքերը բոլոր այն բաներուն դէմ զորոնք մարդիկ շինած են մեզ հրապուրելու և ետքաշելու համար լաւագոյն կեանքը ուսումնասիրելէ, յառաջ ի վեր ընթանանք մինչև որ կարող ըլլանք մեր ծունկերը խոնարհեցնել նոյն իսկ Աղբիւրին քով, և հոն, երբ վար նայինք և տեսնենք


մեր անձկոտ աչքերուն առջև՝ մեր Տէրոջ և վարդապետին քաղցր երեսը, այն ատեն պիտի յազեցնայ մեր ծարարը:

ԱՐԵՎԱԴԱՐՁԻ ԹՈՉՈՒՆԸ

Մը, Զորանք Պըլէն, որ շատ տարեներու նաւաստիութիւն ըրաւ, շատ հըմայիչ ոճով գրող մըն է ծովու վերաբերեալ ամէն բանի վրայ: Իր յօդուածներէն մէկուն մէջ կը նկարագրէ արևագարձի թռչունը, որ յաճախ ցամաքէն հարկւրաւոր մղոն հեռու կը տեսնուի իր կաքաւի մը մեծութիւնն ունի, բայց աւելի մեծ թևեր, և գոյնը ճերմակ է կործքին և զլիւսուն վրայ, և կոնակը և թևերուն վերի կողմը գորշ և սև պիսակներ ունի:

Եալիմ բարձր թառնոցս կ'ելլէի զանիկա տակաւին հոն կը գտնէի:՝ Քիչ անգամ կը բախէ թևերը և այնպէս կ'երևի թէ կը նաւարկէ առանց ճիգերու, առանց երբեք կայմին գագաթէն շատ վար իջնելու: Եւ միշտ առանձին է, շուտ մը կը մեկնի երբ ուրիշ թռչուններ երևնան: Թէ այդ թռչունը ե՞րբ և ի՞նչ կ'ուտէ, և ե՞րբ և ո՞ւր կը հանգչի, հարցումներ են որոնց չկրնար պատասխանել Մը. Պըլէն: Միայն սա կ'ըսէ թէ «Անիկա ինձի համար ունի հմայք մը խոր ծովու թռչուններուն ոնէ մէկուն հմայքէն աւելի մեծ:»

ԼՈՂՏՈՆԻ ԼՈՂՏ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ
Հին օրերը մեծ բան էր Լոնտոնի



Առագաստանաւի մը կայմին գագաթին մօտ դանուոզ պղտիկ բարձրաւանդակը նաւաստիները ազուաւի բոյն կ'անուանեն, և կէտ որսացող նաւերուն վրայ նաւաստի մը կը կենայ ազուաւի բոյնին մէջ, զոր կը տեսնէք այս պատկերին մէջ, մինչ նաւին տախտակաւ մածը շատ վարը կը մնայ: Կուսուստի մը հոն երկու ժամ մնալէ ետքը վար կ'իջնէ և տեղը ուրիշ մը կը գրաւէ: Մէկը հոն գտնուած միջոցին քնանալու չէ, վասն զի եթէ անկէ տախտակամածին վրայ ինչայ, վտանգ կայ թէ պիտի մեռնի: Մը. Պըլէն կ'ըսէ, «Կէտ որսալու նաւի մը ազուաւի բոյնին մէջ կեցած» հորիզոնը գիտելու ատեն շատ անգամ հաճելի ընկերութիւնը վայելած եմ արևագարձի թռչունին, որ բոլոր այն երկու ժամուան միջոցին մօտը կը տատանէր, և հոն կը մնար հազիւ շարժելով մէկ փետուրը: Եւ վարը իմ չորս ժամերուս լմնալէն ետքը երբ դարձ


Լորտ Գաղաքապետ ըլլալ Այդպաշտօնին բարձրացող անձը արքայազունէ մը շատ վար չէր, և գրեթէ արքայական պատիւներ կը տրուէին անոր: Ասկէ երկար ատեն առաջ կրճատուեցաւ անոր իշխանութիւնը, բայց տակաւին կը մնան շատերը այն արարողութիւններէն որոնք հին հեռուաւոր օրերուն մէջ հաստատուեցան: Լոնտոնի այժմուս Լորտ Գաղաքապետը, ճան փառնաւ, իր պաշտօնին վրայ կը գտնուի անցեալ Սեպտեմբերէն ի վեր:

գործի մարդ է: Իր հօրը հետ գործի մտած է շատ պզտիկ եղած ատենը, և հիմա ճան փառնաւ և ընկերութեան վաճառատան պեան է: Իր ընկի քաղաքին ծառայած է զանազան պաշտօններով, զոր օրինակ իբրև ծերակուտական, իբրև դաւառապետ, և հիմա իբրև Լորտ ֆաղաքապետ, և քաղաքը այցելող հիւրերը պատուաւ սիրելու գործը իրեն կը պատկանի:

Լորտ ֆաղաքապետը իր պաշտօնական զգեստներով իրօք միտք պահուելու տեսարան մըն է: Անոր պաշտօնական մասնաւոր նշանն է զուտ ոսկիէ օձիք (եագա) մը աւելի քան հինգ ոտք երկայն: Ասոր կցուած է շքեղ մանեակ մը, որուն կեղծոնը կը կախուի քաղաքին զինանշանը թանկագին քարի վրայ քանդակուած: Վարդերու պսակ մը Սկովտական փուշովն ու իւլանտական առոււոյտով փաթկուած, որ երեք թագաւորութիւններուն նշանն են, կը շրջապատէ զինանշանը, և ասոնք շինուած են ագամանդներէ, որ 100,000 Անգլ. ոսկիէ աւելի կ'արժեն:

Քաղաքը իր Լորտ ֆաղաքապետին կու տայ շքեղ երեք զգեստներ: Մէկը ծիրանեգոյն չուխայէ, ներսի կողմը մետաքս, և սպիտակ աքիսենիով (գազուժ) շրջապատուած: Երկրորդն է սև մետաքսէ, որուն վրայ ծաղիկներ բանուած են արծաթով, և երրորդն է կարմիր մետաքսէ, սև թաւիչէ և թանկագին մուշտակէ զարդերով: Այս զանազան զգեստները, հարկաւ մասնաւոր հանդէսներու ատեն կը հագնուին:

Չորս վաղեմի և մեծագին թուրեր կան, որոնք Լորտ ֆաղաքապետին առջևէն կը տարուին հանդիսաւոր ատեններ, նաև լախտ (թոփուղ) մը, որուն երկայնութիւնը հինգ ոտքէ աւելի է և տասներկու լիպրա (իբր 6 քաշ) կու գայ: Այս պզտիկ արարողութիւնները բաւական չնչին բաներ կ'երևնան, բայց Լոնտոնի ժողովուրդը կարևոր համարելու է զանոնք, վասն զի հին զէնքերը Լորտ ֆաղաքապետին առջևէն ատեն ատեն կրող անձին տարեկան թոշակն է 2,500 Անգլ. ոսկի, և լախտը կրողինը՝ 2,000 ոսկի: Լորտ ֆաղաքապետին տարեկան թոշակն է 50,000 ոսկի, ծախքերուն համար ալ զատ կը վճարուի առատօրէն:




ՊՈՒՊՐԻԿԻՆ ԹԷՅԻ ԽՄԲԱԿԸ

Ահա պատկեր մը որ պիտի հետաքրքրէ մեր շատ փոքր աղջիկ ընթեր-

ցողները, և եթէ շատ չենք սխալիր, պիտի հետաքրքրէ նաև անոնց մայրերն ալ: Մանուկներու, մանաւանդ փոքրիկ մանուկներու, խաղերէն ո՛րչափը մեծ երու գործերուն նմանութիւնն են: Մանչերը ձի, նաւակ կը վարեն, տուներ կը շինեն, հիւանդի բժիշկ կ'ըլլան, սպրանք ծախող վաճառական կ'ըլլան, ևն, և աղջիկները լաթ կը լուան, կ'արդուկեն, հաց կ'եփեն, կը հագուեցնեն և կը հանուեցնեն իրենց պուպրիկները, և անոնց վրայ շատ անգամ իրական գուրգուրանք կը ցուցնեն, և թէ' մանչերը թէ' աղջիկները դպրոց և եկեղեցի կը խաղան, ախումբներ, խմբակներ կը կազմեն և պոստներու կ'երթան: Եւ այս կերպով, առանց երբեք գիտնալու

քին կէսը կը կորսնցնէր եթէ երբեք չտեսնէինք ձեր խաղերը և չլսէինք ձեր խնդալու ձայները: Երջանիկ եղէք, ուրեմն, ինչպէս ձեզի համար նոյնպէս մեզի համար: Եւ երբ մեծնաք, եթէ ունենաք ուղիղ ոգին, պիտի գտնէք թէ ձեր չափահասութեան տարիներուն իրական գործերը երջանկութիւն կը բերեն այնչափ ճշմարտապէս որչափ մանկական խաղի մէջ կատարուած գործերը:



ԿԵԱՆՔԻ ԱՍՊԱՐԷՋԻՆ ՄԷՁ
ՅԱՐԱՏԵՆՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՔԸ

Խումբ մը զուարթ տղաք լեռան մը խորտուրորտ կողերէն վեր կը մագլէին: Կու գային ընդարձակ դաշտերէ և հրճուանքով լեցուած կը գիտէին



անոնք երբեմն խաղը, զուարճութիւնը կը միացնեն չափահասութեան կեանքի պարտականութիւններուն պատրաստութեան հետ: Հոս կը տեսնենք փոքրիկ մայրեր, որոնց մէկը թէյ կու տայ իր մանուկ պուպրիկին, մինչ միւս պուպրիկը համբերութեամբ կը սպասէ սեղանին կրթնած, մինչև որ իր փոքրիկ մայրը իր թէյն ալ պատրաստէ: Անոնք որչափ կրնան կ'ընեն ճիշդ ինչպէս կ'ընեն իրական մայրեր իրենց իրական զաւակներուն: Շնորհակալութեան արժանի բան է որ մենք ամէնս ալ ժամանակաւ մանուկներ էինք, և որ հիմա կրնանք նորոգել մեր մանկութիւնը, դիտելով սիրելի փոքրիկները, որոնք իրենց խաղերուն մէջ կ'ընեն ճիշդ ինչ որ մենք բրած ենք տարիներ առաջ: Եւ, մանուկներ, մի խորհիք թէ դուք կարևորութիւն չունիք աշխարհի մէջ: Կեանքը մեզի ձեզմէ մեծերուս, համար իր արժէ-


գեղեցիկ բլուրները որոնք կը բարձրանային ամէն կողմ: Քիչ մը աշխատելէ ետքը լեռան կողին վրայ, հասան աւելի ցած զառիվեր բլուրին գագաթը, և կայնեցան բարձր կատարին ստքը, որուն ցից, ժայռուտ կողերը իրենց վերևը կը բարձրանային: «Ո՛հ», ըսաւ աղջիկներէն մէկը, քիչ մը տարակուսանքով, երբ կը նայէր դերձանի նմանող ճամբուն վրայ, որ կ'որորուէր ետ ու առաջ: «Ատիկա շատ զառիվեր կ'երևնայ: Իրաւ կը կարծէք թէ կրնանք գագաթը հասնիլ:» «Գագաթը հասնիլ: Ինչո՞ւ. հարկաւ կրնաք:» պատասխանեց աղոց մէկը, որ ուղեցոյցի պաշտօն կը վարէր: Այս տղան իր բոլոր կեանքը անցուցած էր բլուրներուն մէջ, և լեռան գագաթը սարսափ չէր տար անոր: «Միայն քիչ մը աւելի մագլել պէտք է: Կրնաք հասնիլ այս կողմերու ամէնէն բարձր բլուրին գագաթը եթէ ուզէք մագլել:»

Տղուն խօսքերէն խրախուսուելով մագրոյնները դէպի վեր քաշեցին վե-
րելքին աւելի դժուարին մասին վրայ,
Տեսան թէ իրենց ուղեցոյցին ըսածը
չիտակ էր: Քիչ մը աւելի մագլելով,
քիչ մը աւելի դժուարաւ մագլելով
վերջապէս լեռան գագաթը հասան
և հովտին վրայ նայեցան:

Երեք շորս ամիս ետքը այս զուարթ
ընկերները որոնք լեռը ելած էին այն
ամառուան առաւօտը, ամէնն ալ նո-
րէն իրենց տունները կը գտնուէին,
ձմեռուան գործի և խաղերու պատ-
րաստ: Պերճ խորհեցաւ թէ աղէկ էր
իրեն համար որ ձմեռը վաճառատուն
մտնէր քան թէ խաղար, վասն զի
բարձր դպրոց մասած էր Սեպտեմբերի
սկիզբը, և գործը իր ակնկալածէն
աւելի դժուար կը գտնէր: «Ո՛հ,» Ը-
սաւ իրիկուն մը հառաչելով արձեպ-
րական խրթին խնդիրի մը վրայ աչ-
խատելէն ետքը, «Երանի՛ թէ այն
լեռան վրայ գտնուէի հիմա, ճիշդ ա-
նոր ստորտը: Ի՛նչ աղուոր բան էր
անոր գագաթը ելելի:» «Բայց այդ-
պէս չէ՛,» պատասխանեց Նուարդ Ե-
ռանդով: «Կը յիշէք, Պերճ, թէ ես
Արշակի հարցուցի թէ կրնա՞նք լեռան
գագաթը հասնիլ: Եւ անիկա շատ
զարմացաւ և յետոյ ըսաւ, «Անշուշտ,
քիչ մը աւելի մագլելուն քով է բա-
նը:» «Կարծեմ Պերճ մոռցած ըլլա-
լու է ատիկա,» ըսաւ անոր հայրը
իր ձեռքի լրագիրը վար դնելով: «Ո՛չ,
մոռցած չեմ,» ըսաւ Պերճ զարմացած,
«Ի՛նչ բան ձեզի այդպէս խորհիլ
տուաւ:» «Միայն սա որ ես լսեցի թէ
վերջերս քանի մը անգամ տարակու-
սեցար թէ կարո՞ղ ես լեռան գագաթ
մը ելլել, որուն ստորտը կը կայնիս
հիմա:» «Չեմ գիտեր ի՛նչ ըսել կ'ու-
ղէք,» ըսաւ Պերճ տարակուսական
դէմքով մը: «Նոս մեր շուրջը բլուր-
ներ չկան:»

«Երբեք չլսեցի՞ր գիտութեան բլու-
րին վրայ, Պերճ,» հարցուց հայրը,
աչքերը թարթելով: «Թերևս սխալած
ըլլամ, բայց սա գիտեմ թէ երբ
անցեալ Յունիսին քերականու-
թիւնը աւարտեցիր, այդ բլուրին ա-
ւելի ցած մասերուն գագաթը հասար,
և թէ հիմա կը սկսիս մագլել դէպի
բարձր լեռան գագաթը: Դուն քիչ
մը Նուարդի կը նմանիս, շուտ կը
վհատիս վասն զի ատիկա դժուար
կ'երևնայ այդ անդէզ ուր կը կենաս,
բայց վերջապէս, ինչպէս Արշակ ըսաւ,
բանը միայն քիչ մը աւելի մագլելուն
քով է, և կը յուսամ թէ հիմա պի-

տի չժողուս զանիկա:» «Ո՛չ,» պատաս-
խանեց Պերճ եռանդով, տեսնելով
որ նոր ձև մը առաւ խնդիրը, «Ես
պատրաստ եմ աւելի մագլելու, և
միտք չունիմ լեռան ստորտը մնալու:»
«Բանը ճիշդ այսպէս է երբ ունէ
նպատակի համար կ'աշխատինք,» շա-
րունակեց Պերճի հայրը աւելի լրջ-
րէն: «Մեզի բաւական զիւրին կու
գայ ցած բլուրներէ վեր մագլել, բայց
երբ լեռան ոտքը հասնինք և հանդի-
պինք աւելիցիք լեռան մը, շուտ մը կը
վհատինք, և կը մտածենք թէ չենք
կրնար աւելի յառաջ երթալ: Բայց
պէտք է որ քիչ մը աւելի մագլենք,
քիչ մը աւելի դժուարութեամբ մագ-
լենք, բայց ամէն աշխատութիւն կ'ար-
ժէ լեռան կատարը հասնելու համար:»



«ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎԱԾ Է՛»

Երբեք աղէկ չէ շուտով որոշում
առլ ուրիշներու դիտաւորութիւննե-
րու մասին մինչև անգամ անապատի
մը կեդրոնը: Հետեւեալը կը պատմուի
երկու պատանիներու վրայ, որոնք
Սկովտիայէ Ամերիկա գացին ասկէ
վախժան տարիներէ աւելի առաջ և
ճամբորդեցին դէպի վերին Քանա-
տայի անապատները: Անոնց ըսուած
էր թէ գուցէ կուէներ պիտի ունե-
նային Հնդիկներուն հետ, և ուստի
միջոցներ ձեռք առած և պատրաս-
տութիւններ տեսած էին ինքզինքնին
պաշտպանելու համար: Բայց գիշեր
մը, մինչ իրենց վրանը բացած էին
գետի մը քով, մոռցան բոլոր իրենց
ըսուածները և թէ ինչպէս իրենքը-
րենք պիտի պաշտպանէին Հնդիկնե-
րուն դէմ եթէ իրենց վրայ յարձա-
կէին: Եւ ահա յանկարծ տեսան որ
չըջապատուած էին Հնդիկներու փոքր
խումբէ մը: Որովհետև փախչելու ժա-
մանակ չկար, երիտասարդները որո-
շեցին բանակցիլ Հնդիկներուն հետ,
Բայց անոնց բանակցիլը արդիւնք մը
չունեցաւ, վասն զի Հնդիկները Անգ-
ղիերէն մէկ բառ անգամ չէին խօ-
սեր, և Սկովտացի տղաքը բողբոլին
տգէտ էին նշանացի լեզուին, որով
Հնդիկները կը ջանային խօսակցիլ:
Բայց ահա Հնդիկները շարժում մը
ըրին որ պարզապէս կը նշանակէր,
«Եկէք:» «Է՛հ,» ըսաւ տղոցմէն մէկը
իր ընկերով, «յայտնի է թէ պիտի
սպաննուինք:» «Ուրեմն մենք մարդու
պէս պիտի մեռնինք,» ըսաւ միւսը:
Շուտով հասան Հնդիկներու ընդար-
ձակ բնակարան մը և մտան ներս:
Հնդիկները աչք ըրին անոնց որ նրա-

տին բնակարանին կեդրոնը վառուած
մեծ կրակի մը առջև, որ կը գտնուէր
ուղղակի ձեղունին մէկ ծակին ներ-
քէ, որ կը ծառայէր իբրև ծխնելոյզ,
պատահան և օդ առնելու բացուածք:
Հնդիկները պատանիներուն կերակուր
տուին, բայց անոնց ախորժակը գացած
էր, Հնդիկները կերան, յետոյ դուրս հա-
նեցին կացիններ և դանակներ: «Մեր
ժամանակը եկած է,» ըսաւ տղոցմէն
մէկը: «Սոյնպէս կ'երևնայ,» ըսաւ միւ-
սը: «Բայց մեր կեանքերը սուղ ծա-
խենք:» Եւ սակայն Հնդիկները, փո-
խանակ իրենց գէնքերով անոնց վրայ
իյնալու, խուրձ մը փայտ առին և կո-
ղովներ ինքելու սկսան: փայտերէն
չերտեր հանեցին, չափեցին, ձեղքե-
ցին և ծռեցին: Հնդիկները ժամանակ
մը իրենց աշխատութիւնը շարունա-
կելէ ետքը, անոնցմէ մէկը, որ ցե-
ղապետի կը նմանէր, յանկարծ ձայն
մը հանեց, որ սարսափեցուց տղաքը:
Հնդիկները վար ձգեցին իրենց գոր-
ծիքները և շրջանակ մը կազմեցին
կրակին և սպիտակամորթ տղոց բու-
րտաբք: Մահուան ահաւելի արարու-
ղութիւնը սկսուելու վրայ էր: Այնու-
հետև գլխաւոր Հնդիկը եղանակ մը
սկսաւ և բոլոր միւսները անոր հետ
միացան երգել: Սկովտացի տղաքը ա-
ղէկ գիտէին այդ եղանակը և զոր սո-
վոր էին երգել սա բառերով,

«Կը խնդայի երբ կ'ըսէին,
Երթանք Տէրով տաճարն վըսեմ,»

Եւ:»
Տղաքը երբոր վրայ նայեցան ապ-
շած, և երբ Հնդիկները երգեցին այս
երգը — իրենց լեզուովն հարկաւ—
սկան երգել ուրիշ մը աւելի եռանդ-
ով, «Ո՛վ խաչեալ փրկիչ Քրիստոս:»
Տղոց վախերը փարատեցան: Իրենց
լեզուով անոնց հետ միացան երգել
այդ երգը, անտարակոյտ աւելի աչ-
խոյժով քան զոր ունեցած էին առաջ
զանիկա երգելու ատեն: Եւ երբ
Հնդիկները աւարտեցին իրենց պաշ-
տամունքը, տղաքը պառկեցան քնա-
նալու, և հանգիստ քնացան կրակին
տաքութեան մէջ:

Հնդիկներու այս ցեղը միսիոնարնե-
րու այցելութիւնն ընդունած էր. և
մարդոց նպատակը ուրիշ բան չէր,
բայց միայն երախտագիտական հիւր-
ընկալութիւն մը ընել իրենց բնակա-
րանը բերելով այս թափառական
սպիտակամորթ պատանիները: Հետև
եալ առաւօտ տղաքը այնորժով կերան
իրենց հիւրընկալներուն տուած կերա-
կուրը, և ամենաշերմ շնորհակալութիւն-
ներ յայանելով իրենց ճամբան գացին:

Տարեկան բաժանորդագին 6 դահ. արծաթ
կանիկ, ամէն տեղւոյ համար:

Ամերիկայի Մեծնորայց Ընկերութեան կողմէն
Արտօնատէր ձ. Բ. Կրիչ
Տնօրէն—Մմազդիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՅԱՐԱՆԻ Ա. ՅԱՌՈՒ ՊԵՏԱԿԱՆ
Ֆինանսըլար Եօզուշու, Ամերիկան Խան